ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 56 80 88, քարտուղարություն հեռ.՝ 59 68 75

№ 24/1459 « 29 » 12 2020թ.

Ձեր

Ալեքսիմ ՍՊԸ (ՀՎՀՀ 06949225)
ք.Երևան, Մաշտոցի 54ա
էլ. հասցե՝ alexim.spy@bk.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության /այսուհետ՝ պատվիրատու/ և «Ալեքսիմ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կատարող/ միջև կնքված N ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ, 09.12.2020թ. պայմանագրի և 21.12.2020թ-ին կնքված ֆինանսական միջոցների հաստատման համաձայնագրի շրջանակում կատարողը 2020 թվականի դեկտեմբերի 21-ին ներկայացրել է գրավոր թարգմանչական նյութեր, սակայն գնման հայտը նախագծած ստորաբաժանման կողմից տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու տեսական քննության հարցերի թարգմանությունները զննելուց հետո պարզվել է, որ այն չի համապատասխանում պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջներին, քանի որ այն չի կատարվել մասնագիտական (տեխնիկական) տերմինաբանությամբ, պարունակել է բովանդակային մի շարք թերություններ: «Ալեքսիմ» ՍՊԸ-ի կողմից հայցվել է մեկ հավելյալ օր թերությունները շտկելու համար և 22.12.2020թ-ին ներկայացվել է վերջնական շտկված տարբերակը: Վերջնական շտկված տարբերակի ուսումնասիրությամբ պարզվել է, որ թարգմանչական նյութերը պարունակում են վերը նշված բովանդակության համանման սխալներ, որի մասին տեղեկացվել է կատարողին:

Մինչ օրս կատարողի կողմից ճանապարհային ոստիկանություն չի ներկայացվել գրավոր թարգմանչական նյութեր պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրի համապատասխան և ընդունման-հանձնման ակտը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը/ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին./ և Պայմանագրի 2.1.2-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և '' Ալեքսիմ '' ՍՊԸ-ի միջև 09.12.2020թ-ին կնքված թիվ **ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ** ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

''Ալեքսիմ'' ՍՊԸ-ին ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ,գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Յունիբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայանգրի տեսքով պայմանագրի և որակավորման ապահովումների սահմանված գումարը՝ 690 000 /վեց հարյուր իսուն հազար/ ՀՀ դրամ որակավորման ապահովում և 69000 /վաթսունինը հազար/ ՀՀ դրամ պայմանագրի ապահովում, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Պետ,ոստիկանությանգնդապետ **Ա.Ներսիսյան**